30.07.2024թ. ք. Վանաձոր

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Լոռու մարզպետին կից՝ հասարակական կազմակերպություններից և մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբի ընդլայնված նիստի

Մասնակցում էին՝

Արամ Ղազարյան - Լոռու մարզպետ

Հովհաննես Ավետիսյան - Լոռու մարզպետի տեղակալ, աշխատանքային խմբի ղեկավար

Աննա Գասպարյան - Աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ, Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Ալլա Նահապետյան - Աշխատանքային խմբի քարտուղար, Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Արուս Թումանյան - Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Վալերի Ջաղինյան - Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Իրինա Մարտիրոսյան - Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Գարեգին Քարհանյան - Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Անի Բաղդասարյան - Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ

Լուսինե Ավետիսյան - «Փեթակ» ԲՀԿ նախագահ

Թամարա Գրիգորյան - «Մանկական կենտրոն» ՀԿ նախագահ

Սուսաննա Մարտիրոսյան - «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ Վանաձորի համայնքային կենտրոնի տնօրեն

Գագիկ Սերոբյան - «Խուլերի կրթամշակութային կենտրոն» ՀԿ նախագահ

Վլադիմիր Ղարաջյան - «Հայկական կարմիր խաչի ընկերության» Լոռու մարզային մասնաճյուղի նախագահ

Հրանուշ Բարաթյան - «Հայկական կարմիր խաչի ընկերության» Լոռու մարզային մասնաճյուղի գործադիր տնօրեն

Սոֆիկ Մինասյան - «Արփի» ՀԿ նախագահ

Ջավահիր Հակոբջանյան - «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ «Սպիտակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի համակարգող

Սյուզան Հովսեփյան - «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի դրամաշնորհների ղեկավար

Նունե Խուբլարյան - «Ինֆորմացիոն կենտրոն» ՀԿ նախագահ

Էմիլիա Մարտիրոսյան - «Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» ՀԿ նախագահ

Լիպարիտ Դալլաքյան - «Ողջ մնալու արվեստը. Վանաձոր» ՀԿ-ի համահիմնադիր

Նարինե Ղազարյան - «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Վանաձորի «Փոքրիկ Իշխան» երեխաների խնամքի ցերեկային կենտրոնի համակարգող, «Խաչվող ուղիներ» ՍՀԿ նախագահ

Լիլիա Աբրահամյան - Քաղաքացիական նախաձեռնությունների հեղինակ

Անուշ Ասլանյան - «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ

Աստղիկ Ասրյան - «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ աշխատակից

Սուսաննա Ապրեսյան - «Մոլորակ մշակութային լրատվական» ԲՀԿ նախագահ

Գևորգ Քոթանջյան - «Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման ՀԿ նախագահ

Արբակ Սարգսյան - «Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման ՀԿ փոխնախագահ

Գայանե Բալայան - «Արգինա» մշակութային ՀԿ նախագահ

Գոհար Գևորգյան - «Լիարժեք կյանք» ՀԿ աշխատակից

Աստղիկ Թարխանյան - «Լուսաստղ» ՀԿ աշխատակից

Լուսինե Սարգսյան - «Համայնքային համախմբման և աջակցման կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ, լրագրող

Նոնա Գրիգորյան - «Լոռու տարածաշրջանային զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ տուրիզմի մասնագետ

Հռիփսիմե Միրզոյան - «Վիններթ Վանաձոր» ՀԿ նախագահ

Աննա Հայրապետյան - «Ռեստարտ Վանաձոր» երիտասարդական ՀԿ նախագահ

Մարիետա Սողոյան - «Օրրան» ԲՀԿ մանկավարժ

Արարատ Արարատյան - «Աշխարհն իմ տունն է» ՀԿ նախագահ

Գևորգ Մանուկյան - «ՀՍԻԿ» ՀԿ նախագահ

Վարդինե Գրիգորյան - «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ծրագրերի ղեկավար

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ողջույնի խոսք:
   (Լոռու մարզպետ Արամ Ղազարյան)
2. Համատեղ իրականացված աշխատանքների ներկայացում:
   (զեկուցողներ՝ աշխատանքային խմբի ղեկավար, մարզպետի տեղակալ Հովհաննես Ավետիսյան, աշխատանքային խմբի անդամ Նարինե Ղազարյան):
3. Կազմի փոփոխության, նոր կազմի հաստատման և գործող կանոնակարգի փոփոխության առաջարկ:
   (զեկուցող՝ Լոռու մարզպետ Արամ Ղազարյան)
4. Առաջարկների ներկայացում համագործակցության ծրագրերի վերաբերյալ (զեկուցողներ՝ աշխատանքային խմբի անդամ, Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Անի Բաղդասարյան, աշխատանքային խմբի անդամներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ):
5. Այլ հարցեր:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ՝

1. Նախորդ ժամանակահատվածում իրականացված աշխատանքները (զեկուցողներ՝ աշխատանքային խմբի ղեկավար, մարզպետի տեղակալ Հովհաննես Ավետիսյան, աշխատանքային խմբի անդամ Նարինե Ղազարյան):
2. Աշխատանքային խմբում ներգրավված ՀԿ-ների կազմի փոփոխության, նոր կազմի հաստատման առաջարկները: Նիստի մասնակիցների կողմից առաջարկվեցին հետևյալ ՀԿ-ների և նրանց ներկայացուցիչների թեկնածությունները՝

1. **Գևորգ Մանուկյան** - «ՀՍԻԿ» նախագահ
2. **Վարդինե Գրիգորյան** - «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ծրագրերի ղեկավար
3. **Հռիփսիմե Միրզոյան** - «Վիններթ Վանաձոր» ՀԿ նախագահ
4. **Աննա Հայրապետյան** - «Ռեստարտ Վանաձոր» երիտասարդական ՀԿ նախագահ
5. **Սոֆիկ Մինասյան** - «Արփի» ՀԿ նախագահ,
6. **Ջավահիր Հակոբջանյան** - «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ «Սպիտակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի համակարգող
7. **Սյուզան Հովսեփյան** - «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի դրամաշնորհների ղեկավար
8. **Լիպարիտ Դալլաքյան** - «Ողջ մնալու արվեստը. Վանաձոր» ՀԿ համահիմնադիր

9. **Նարինե Ղազարյան** - «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Վանաձորի «Փոքրիկ Իշխան» երեխաների խնամքի ցերեկային կենտրոնի համակարգող, «Խաչվող ուղիներ» ՍՀԿ նախագահ
10. **Լիլիա Աբրահամյան** - Քաղաքացիական նախաձեռնությունների հեղինակ
11. **Անուշ Ասլանյան** - «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ
12. **Լուսինե Սարգսյան** - «Համայնքային համախմբման և աջակցման կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ, լրագրող
13. **Լուսինե Ավետիսյան** - «Փեթակ» ԲՀԿ նախագահ
14. **Էմիլիա Մարտիրոսյան** - «Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» ՀԿ նախագահ
15. **Գոհար Գևորգյան** - «Լիարժեք կյանք» ՀԿ աշխատակից
16. **Գևորգ Քոթանջյան** - «Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման ՀԿ նախագահ

Առաջարկվեց փոփոխություններ իրականացնել գործող կանոնակարգի ԳԼՈՒԽ 3-ի «Աշխատանքային խմբի կառուցվածքը և մարմինները» բաժնում՝ «Աշխատանքային խումբը կազմված է 17 անդամից» նախադասությունը շարադրել «Աշխատանքային խումբը կազմված է 24 անդամից», «որոնցից 5-ը մարզպետի աշխատակազմի, 9-ը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ են» նախադասությունը շարադրել՝ «5-ը մարզպետի աշխատակազմի, 16-ը՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ են», իսկ «Վերջիններիս ընտրությունը կատարվում է հասարակական կազմակերպությունների, քաղհասարակության ակտիվ ներկայացուցիչների կողմից՝ քվերակությամբ: Այս պարագայում գործում է ռոտացիոն սկզբունք: Հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ակտիվ ներկայացուցիչների կազմից 4-ը ենթակա են փոփոխության՝ այլ հասարակական կազմակերպությունների ևս կազմում ընդգրկվելու հնարավորություն տալու նպատակով: Գործընթացն իրականացվում է յուրաքանչյուր տարվա առաջին նիստի ընթացքում՝ աշխատանքային խմբի կողմից կազմակերպված քվեարկությամբ» միտքը շարադրել «Վերջիններիս ընտրությունը կատարվում է հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ակտիվ ներկայացուցիչների կողմից՝ քվեարկությամբ»:

ԳԼՈՒԽ 4-ի «Աշխատանքային խմբի անդամի իրավունքներն ու պարտականությունները» բաժնի 3-րդ կետի «բ» ենթակետը՝ «Աշխատանքային խմբի կողմից՝ Աշխատանքային խմբի անդամների ընդհանուր թվի ձայների 2/3-ի կողմից ընդունված որոշմամբ, եթե Աշխատանքային խմբի անդամը անհարգելի պատճառով հաշվետու տարում չի մասնակցել նիստերի կեսից ավելիին» շարադրել «եթե Աշխատանքային խմբի անդամը անհարգելի պատճառով չի մասնակցել առնվազն 3 նիստի»:

ՈՐՈՇՎԵՑ.

1. Մարզի ղեկավարի առաջարկությամբ և քվեարկության արդյունքում (35 կողմ, 1 ձեռնպահ) աշխատանքային խմբի կազմը ընդլայնվեց՝ ընդգրկելով հասարակական կազմակերպությունների ևս 7 ներկայացուցիչների: Այսպիսով՝ «Լոռու մարզպետին կից հասարակական կազմակերպություններից և մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբը» կունենա 24 անդամ, որոնցից 8-ը՝ Լոռու մարզպետի աշխատակազմից, 16-ը՝ հասարակական կազմակերպություններից և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից:
2. ԳԼՈՒԽ 3-ի «Աշխատանքային խմբի կառուցվածքը և մարմինները» բաժնում՝ «Աշխատանքային խումբը կազմված է 17 անդամից» նախադասությունը շարադրել «Աշխատանքային խումբը կազմված է 24 անդամից», «որոնցից 5-ը մարզպետի աշխատակազմի, 9-ը քաղհասարակության ներկայացուցիչներ են» նախադասությունը շարադրել՝ «5-ը մարզպետի աշխատակազմի, 16-ը՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ են», «Վերջիններիս ընտրությունը կատարվում է հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ակտիվ ներկայացուցիչների կողմից՝ քվերակությամբ: Այս պարագայում գործում է ռոտացիոն սկզբունք: Հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ակտիվ ներկայացուցիչների կազմից 4-ը ենթակա են փոփոխության՝ այլ հասարակական կազմակերպությունների ևս կազմում ընդգրկվելու հնարավորություն տալու նպատակով: Գործընթացն իրականացվում է յուրաքանչյուր տարվա առաջին նիստի ընթացքում՝ աշխատանքային խմբի կողմից կազմակերպված քվեարկությամբ» միտքը շարադրել «Վերջիններիս ընտրությունը կատարվում է հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ակտիվ ներկայացուցիչների կողմից՝ քվեարկությամբ»: ԳԼՈՒԽ 4-ի «Աշխատանքային խմբի անդամի իրավունքներն ու պարտականությունները» բաժնի 3-րդ կետի «բ» ենթակետը՝ «Աշխատանքային խմբի կողմից՝ Աշխատանքային խմբի անդամների ընդհանուր թվի ձայների 2/3-ի կողմից ընդունված որոշմամբ, եթե Աշխատանքային խմբի անդամը անհարգելի պատճառով հաշվետու տարում չի մասնակցել նիստերի կեսից ավելիին» միտքը շարադրել՝ «եթե Աշխատանքային խմբի անդամը անհարգելի պատճառով չի մասնակցել առնվազն 3 նիստի»:
3. Ձևավորել տեղեկատվական բազա հասարակական կազմակերպությունների կողմից մարզում իրականացվող ծրագրերի վերաբերյալ:
4. Հաջորդ նիստը գումարել 10.09.2024թ.:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ